11. ատակ անանց լինձ եւ ծնողաց իմոց
12. եւ եղբարց եւ հոգեւոր որդւոյ իմոյ Սար
13. գիս վարդապետի այլ եւ սահմանե
14. ցի ծառ զարդարին իրից արարաց
15. ն Բ սպիտակ յէրէցն տալ եւ մի աբ
16. անքս էտուն մեզ զատկին ճ
17. բազալոյցն զամէն էկեղեցիքս
18. պատարագել կատարիչք նաւրին։

Նոյն խաչքարի կողի վերայ է երկրորդ արձանագրութիւնը.

1. Թվին ՉԻԲ
2. յիշխանութեն եւ ի
3. տէրութե սրբ ուխտիս աբաբ
4. ակ ամիր սպա
5. սալար պար
6. ոն Սադո
7. ւնին ես տր
8. Յովանէս
9. կանգնեցի զխ
10. աչս Ամենափրկի
11. չ աւգնական պարո
12. ն Սադունին եւ յ
13. իշատակ հոգ
14. ոգւոյ (էրէ.) իմոյ[1]։

Այստեղ յիշուած անձնաւորութիւնները շատ ու քիչ ծանօթ են մեզ իրենց պատմական անցեալով. Սադուն իշխանի մասին գրել ենք մեր «Զագավանից Ժողովը» վերնագրով յօդուածի մէջ[2]. նա Մահկանաբերդի իշխանն էր. հայրը Շէրբարոք, պապը Սադուն Ա., իսկ մեծ պապը Ամիր-Բուրդ, Վրաց Գէորգ Գ.ի ժամանակ Տփխիսի ամիրան և նորա գլխաւոր օգնականը Օրբէլեանների ապստամբութեան դէմ մղուած պատերազմի մէջ. այս Բրդի հրամանով է շինուած Սեւանի փայտակերտ հնագոյն դուռը։ Զաքարէ եւ Իւանէ սպասալարների մայրը Սահակդուխտ՝ Սարգիս մեծի կինը՝ Բրդի քոյրն էր, իսկ Զաքարիա մեծի թոռնորդին Մխարգրձել Շահնշահը այս Սադունի փեսան, նորա Նազովդ դստեր ամուսինը։ Սրանց փեսան էր նաև Սմբատ Օրբէլեան, Լիպարտի որդին, Տաթեւի և Նորավանից առաջնորդ Յոհան Աւրբելի եղբայրը[1]։ Սադունի որդին էր Խուտլու Բուղան, որի որմանկար պատկերը գտնւում է Հաղբատի տաճարի հարաւային պատին՝ ներսից, և հրատարակել է ակադեմիկ Մառը[2]։

Նրանց իշխանութիւնը տարածուած էր Կայենոյ և Մահկանաբերդի գաւառներում, համանուն բերդերով. հոգևոր կեդրոններից գլխաւորը Հաղբատն էր, որի արձանագրութիւնների մէջ, բացի վերոյիշեալներից, մի քանիսի մէջ յիշւում են Սադունի անունը, բայց նաև Մակարայ, Դեղձուտի և երկրորդարար Առաքելոց, կերանց և Մորոյ ձորոյ վանքերը[3]. Դեղձուտի վանքը ծաղկած էր իբրև մտաւոր կեդրոն հէնց այս Սադունի ժամանակ[4]։

(1) Առաջին արձանագրութիւնը կրկնուած է Ծիթլաւսանի եւ Վայէի խաչարձանի յետեւը, որ զբաղուում է Պողոտայ կոչուած սրահում, տաճարի արեւելեան կողմը։ Հաղբատի այս եւ մնացած բազմաթիւ արձանագրութիւնները ստուգել ենք եւ գրի առել անձամբ. հմմ. Հնախօսական Տեղագրութիւն Հաղբատայ Ռ. Երզնկեանց. արտատպ. «Արարատ»ից 1886. 43|4։ Ջալ. ձանապ. Ա. 70։ Ե. Լալայեան. Ազգ. Հանդէս VII. եւ VIII. 406։ Ընդգծուածները կցումներով։ Նկարելու համար տեղն անյարմար, ուստի եւ չի նկարուած։

(2) Շողակաթ. Ս. Էջմիածնի հայագիտական ժողովածու. Վաղարշ. 1913. 26։

(1) Մեր Խաղբակեանը. 6. 12. 81։ Հաղբատի արձ. երզնկեան 28։ Օրբէլեան. Ղուկ. հրատ. գլ. ԿԶ։

(2) Christ. Wocmok. SP. 1912. T. I. 351. Tabl. XXI.

(3) Ջալալեան. 152. 156։ Բարխուդարեան. Արցախ. 342. 378։ Սադունի յիշատակութիւն տե՛ս նաեւ Խուռակերտի արձ. Սիոն. 1933. Մարտ. եր. 84 եւ բիչ յետոյ Փոքր Աթոռակի արձանագրութեան մէջ։

(4) Ձեռ. Էջմ. N 528նժ. յիշատակարանից. «Գեորգ որդի Պարուտա թոռին Հզարայ, յերկրէն Խաչենոյ ի մեծահռչակ բաւարանէն Դանձասարայ» մակացու էր եկել «յերկիրս Մահկանաբերդոյ ի վանս Դեղձուտի առ ոտս Առաքել վարդապետի». յիշատակարանը գրուած է «ի թվիս ՉԻԹ աւգոստոսի ւժ։» Նա խնդրում է յիշել Վահրամ եւ Ստեփանոս հոգեւոր եղբայրներին, որոնք ոչ միայն ձեռագրի օրինակն են շնորհել, այլ եւ «ի միում խցի պանդխտանէաբ»։ Նրանք այդ օրերում գնում են իրենց երկիրը՝ Այրարատեան գաւառը եւ գրչին մենակ թողնում. մի հանգամանք. որ ցոյց է տալիս, թէ Դեղձուտի վանքը հոգեւոր կեդրոն էր Առաքել վարդապետի օրով, որին աշակերտելու էին գալիս այլ եւ այլ գաւառներից եւ ձեռագիրներ գրում։

Նման տեղեկութիւն ստանում ենք եւ Կտուց անապատից բերուած N 471 նժ., ստուար Տաւնապատմաւոր յիշատակարաններից, գրուած Շմաւոն գրչի եւ Գրիգոր բահանայի ձեռքով՝ անն սպասաւոր Բանի Սարգսի պատուէրով՝ «դժուար ի գիւտ գրչաց» այս մատեանը։ «Արդ ես Սարգիս յարձ էի դեգերել առ ոտս կենդանի վիմիս Առքլ վարդ։ ի գաւառիս Մահկանաբերդոյ ի պատրոնութի սթապակ Սադունին. եւու գրել զգիրքս զայս այլ եւ այլ գրչաց. զի օրինակ չգտանէաբ զկարգ ասացուածոց յիմանալ միայնարանին ի Դեսիկ. ի թվ. հա .ՉԻԴ. եւ զպատճառն տանից ի Թառակին, ձեռամբ կուսակրօն Գրիգոր քհ թվ. ՉԻԹ (թուականը լուսանցքում, բայց